Չինարենի խմբակի ծրագիր 7-ից 9-րդ դասարանների աշակերտների համար

Աբովյանի N 2 հիմնական դպրոց

Տնօրեն՝ Ա. Տաշչյան

Խմբակի ղեկավար՝ Մարիամ Հարությունյան

Ծրագրի հեղինակ՝ Մարիամ Հարությունյան

Շաբաթական 2 ժամ, տարեկան 68 ժամ

1. Բացատրագիր

Տվյալ ծրագիրը նախատեսված է Աբովյանի N 2 հիմնական դպրոցի 7-ից 9-րդ դասարանների աշակերտներին չինարեն ուսուցանելու համար: Այն հնարավորություն կտա չինարեն սովորել ցանկացողներին լեզուն զրոյից ուսումնասիրել, գրել և կարդալ չինական հիերոգլիֆների որոշակի խմբաքանակ, ծանոթանալ չինական մշակույթին:

Ծրագիրն իրականացվում է որպես պետական կրթական ստանդարտի ներդրման մաս և կարգավորվում է հետևյալ իրավական ակտով.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վահրամ Դումանյանի 2022 թվականի փետրվարի 18-ի 05-Լ հրաման «Հանրակրթական հիմնական, ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր նիրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման ու գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգ» ըստ որի.

Խմբակը ձևավորվում է (տարիֆիկացվում է), եթե ծրագիրը հաստատվել է տնօրենի կողմից, և առնվազն 8 սովորող դրանում ընդգրկվելու ցանկություն է հայտնել:

2. Ծրագրի նպատակը

Մեր դասընթացի նպատակն է.

- Աշակերտներին ծանոթացնել արդի չինարենի առանձնահատկություններին
- Ձևավորել չինարենի հնչյուններն ու վանկային միացությունները ճշգրիտ արտաբերելու, ինչպես նաև հիերոգլիֆների որոշակի քանակ հիշելու ունակություններ
- Հարստացնել աշակերտների սկզբնական հաղորդակցման ունակությունները, լեզվական գիտելիքները, բառապաշարը
- Ձևավորել արդի չինարենով գրելու, կարդալու և պարզունակ տեքստեր հասկանալու և թարգմանելու ունակություններ
- Ծանոթացնել չինական մշակույթին

3. Ծրագրի խնդիրները

Վերը նշված նպատակներն իրականացնելու համար առաջ ենք քաշել հետևյալ խնդիրները՝

- Օգտագործել տարբեր ուղիներ՝ լեզվի ուսուցումը կազմակերպելու համար՝ դասագրքեր, տեսահոլովակներ, աուդիոձայնագրություններ:
- Ուսուցումն առավել մատչելի դարձնելու համար ուսումնասիրվող տեքստերը, բառերն ու արտահայտությունները ներկայացնել նաև չինարեն հիերոգլիֆների լատինատառ արտասանության ձևերով՝ փինյիններով:
- Աշակերտների բանավոր խոսքը զարգացնելու, հաղորդակցման հմտություններ ամրապնդելու համար առցանց կամ առկա տարբերակով կազմակերպել հանդիպումներ լեզվակիրների հետ:

4. Ծրագրի վերջնարդյունքները

Դասընթացի ավարտին աշակերտը՝

- Ունակ կլինի ճշգրիտ արտասանելու չինարենի հնչյունները
- Կիմանա չինարեն հիերոգլիֆների որոշ խմբաքանակի գրության ձևերը

- Կունենա գիտելիքներ չինական մշակույթից
- Կիմանա ամենօրյա արտահայտություններ և հիմնական բառակապակցություններ՝ կոնկրետ տեսակի կարիքներ բավարարելու համար
- Կկարողանա լսել և հասկանալ պարզ արտահայտություններ չինարենով
- Ունակ կլինի գրելու կարճ, հասարակ նախադասություններ ուսումնասիրվող լեզվով
- Կյուրացնի չինարենով տեքստ գրելու և ընթերցելու նրբությունները,
- Կզարգացնի չինարենից հայերեն և հայերենից չինարեն թարգմանչական նվազագույն ունակությունները
- Կկարողանա շփվել պարզ ձևով:

5. Բովանդակություն

Ստորև ներկայացված են թեմաներն ըստ դասաժամերի.

	Թեմա	**Դասաժամ**
1	Ներածական հատված՝ չինարենի և չինական մշակույթի վերաբերյալ (լեզվի սովորելուն նպաստող մոտիվացնող պատմությունների և չինարենի մասին հետաքրքիր փաստերի հիշատակում):	1
2	«Բարև Ձեզ: Ինչպե՞ս եք»: Չինարենի լատինատառ արտասանության տարբերակը՝ փինյին: Տոներ: Սկզբնահնչյուններ և վերջնահնչյուններ: Հիերոգլիֆների ճիշտ գրելու կանոններ: Չինարենի քերականության հիմնական առանձնահատկությունները	4
3	«Դուք ազա՞տ եք»: Տոների փոփոխումներ: Ձեզոք տոն: Հարցական նախադասություններ 吗 մասնիկով: Ածականով կազմվող բաղադրյալ ստորոգյալ: Հիերոգլիֆների ճիշտ գրելու կանոններ:	5
4	«Ո՞ր երկրից եք»: Արտասանության կանոններ: Ժխտական նախադասություն: Չինարենի բանալիները:	4
5	«Ինչ է Ձեր անունը»: Հարցական նախադասություններ: Միացված նշագծեր: Չինական անուններ:	4

6	«Որտե՞ղ է ճաշասենյակը»: Հարցական նախադասություններ հարցական բառերով: Վերջնահնչյուն 儿 - ի փոփոխումները: Նշագծերի հերթականությունը: Թվեր 1-10	4
7	«Արի գնանք լողալու, լա՞վ»: Բայական ստորոգյալով նախադասություններ: Նշագծերի համատեղում:	5
8	«Դու ճանաչու՞մ ես նրան»: Հատկացուցիչ:也 և 都 մակբայների տեղը նախադասության մեջ: Այլընտրանքային հարցական նախադասություններ: Կրճատ հարցեր 呢 մասնիկով:	4
9	«Քանի՞ հոգուց է բաղկացած Ձեր ընտանիքը»: Հաշվելի բառեր: Հոգնակի թիվ: Թվեր 11-100: 有-ով նախադասություններ:	5
10	«Քանի՞ տարեկան է նա»: Շաբաթվա օրեր, ամիսներ: Ժամանակի մակբայներ: Անվանական բաղադրյալ ստորոգյալ: «Բարև»-ը և «ցտեսություն»-ը Չինաստանում:	5
11	«Ի՞նչ ես ցանկանում գնել»: Նախդրավոր արտահայտություններ: 很 մակբայով և ածական ստորոգելիով նախադասություններ: Չինական դրամանիշերը:	4
12	«Ես կարող եմ մի քիչ չինարեն խոսել»: Ցանկություն արտահայտող բառերով նախադսսություններ: Նախադասության բազմակի անդամներ:	2
13	«Ինչպե՞ս ես այստեղ եկել»: Արդյունքի լրացում: Այլընտրանքային հարցեր:	2
14	«Ես ինձ լավ չեմ զգում»: Մարմնի մասեր: Հիերոգլիֆների կրկնությունը չինարենում:	4
15	«Ես մի աղջկա հետ եմ ծանոթացել»: 了 մասնիկի կիրառությունը չինարենում: Հանձնարարություն արտահայտող եղանակավորող բայեր:	5
16	«Գնալու եմ Չինաստան՝ ճամփորդելու»: Գործողությունների հաջորդականությունը չինարենում:	4
17	«Շնորհավոր Նոր տարի»: Չինարեն նախադասությունների չորս տեսակները: Հարցի տեսակները չինարենում: 吧 նախդիրի առանձնահատկությունները:	5
18	Դասընթացի ամփոփում՝ վիկտորինայի շրջանակներում:	1

Օգտագործված գրականության ցանկ

1. Հակոբյան Լ., Սամվելյան Ա., Չինարենի քերականության ձեռնարկ, Երևան, 2022, 112 էջ:
2. Ցաո Ջ., Հովսեփյան Մ., Չինարեն, Երևան, 2009, 260 էջ:
3. Горелов В.И., Теоретическая грамматика китайского языка, Москва, 1989, 318 стр.
4. 新实用汉语课本 1

Էլեկտրոնային ռեսուրսներ

1. https://kupdf.net/download/new-practical-chinese-reader-1pdf_59db7b5808bbc504074351fd_pdf
2. https://www.youtube.com/watch?v=gKUXDkQISF8
3. https://www.youtube.com/watch?v=-rFdjoEtg-8
4. https://www.youtube.com/playlist?list=PLB1B262B05A6992FD